Խաչիկ Դաշտենց

Լեռան ծաղիկները

Ես ձեզանից լեռան ծաղիկներ եմ ուզում,
- Մայրը ասաց մի օր երկու որդիներին:
Եվ մանուկներն իսկույն մագլցեցին սարեր,
Որ իրենց մոր ուզած ծաղիկները բերեն:
Մեծը լեռան կողից շորթեց մի բուռ կակաչ,
Քարուտներում բացված անթիվ լվածաղիկ,
Փոքրը ստորոտից դիմեց դեպի գագաթ,
Որ ամենից սիրուն ծաղիկները քաղի:
Այդպիս ամեն ծեգին երկու եղբայրն ուրախ
Բարձրանում էին սարը, որ նոր փնջեր բերեն,
Մեծը կանգ էր առնում ցածրիկ բլուրներին,
Փոքրը համառորեն միշտ ձգտում էր վերև:
Ծերպից ծերպ էր անցնում այդ անհանգիստ տղան,
Որոնելով անվերջ նոր ծաղիկներ լեռան,
Մի անծանոթ տուղտի կամ շուշանի համար
Կռանում էր ահեղ անդունդների վրա:
Մեծը գյուղ էր գալիս միշտ կեսօրից առաջ,
Մի ահագին փնջով, աղաղակով, կանչով,
Փոքրը տուն էր դառնում ուշ գիշերվա ժամին,
Լուռ անցնելով քնած խրճիթների մոտով:
Մեծը վերադարձին մի ցից սարի նստած

Դասավորում էր նույն ծաղիկները չնչին,
Ժողովում էր փոքրիկ ընկած շուշանները
Եվ խառնում էր նրանց իր ահագին փնջին:
Մեծ եղբայրը մեռավ թոնրի շրթին պառկած
Կակաչներով ներկած ամբողջ դուռ ու տանիք,
Եվ թաղեցին նրան գյուղապետի կողքին,
Զանգակատան առաջ, հանգիստ ու երջանիկ:
Փոքրի դիակը սարի հովիվները գտան
Եվ ուսերին դրած գյուղը բերին լռիկ,
Նա իր ձեռքում բռնած ուներ մի նոր ու թարմ,
Մի լեռնային չքնաղ ու անծանոթ ծաղիկ:
Եվ ոտքերին ձյուն կար անապական լեռան,
Եվ արյուն կար սառած կրունկների վրա,
Եվ շուրթերին ժպիտ, կարծես ասում էր նա.
«Մայր իմ, քեզ սիրեցի և քեզ համար մեռա» :
Բանաստեղծը նա է, ով մեծ եղբոր նման
Չի հավաքում ընկած շուշանները ճամփի,
Եվ չի դասավորում միշտ նույն ծաղիկները
Միշտ միևնույն փնջում, որ իր մորը խաբի:
Բանաստեղծը նա է, որ փոքր եղբոր նման
Միշտ գալիս է մութին և գնում է շաղին,
Եվ ընկնում է դաժան ձյունների մեջ լեռան,
Իր ձեռքի մեջ բռնած մի հազվագյուտ ծաղիկ:
1940